

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелкъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանիւր տողաւորին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ԱՌՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ
Լուրջ վերաբերմունք.—Ներքին Տեսչական
Թիւն. Մամուլ. Ցուցանանքների բացումը.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մակ-Կիւնէյ. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ. Թուրքիայի զորքերը.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԼՈՒՐՁ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԻՔ

Այն բոլոր յօդուածները, ճառերը եւ
բարեմարտութիւնները մէջ, որոնք երե-
ւան եկան ցուցահանդէսի առթիւ, շնոր-
հաւ են երկու գլխաւոր կէտ: Գուցահան-
դէսը պէտք է ներկայացնէ մեր արդիւնա-
գործութեան ներկայ վիճակը իր բոլոր
կարիքներով: Նոյն ցուցահանդէսը պէտք է
պարզէ այն միջոցները, որոնցով կարելի է
մեր արդիւնագործութեան զարգացումը
ապահովել առաջիկայում:

Որպէս զի ցուցահանդէսը կարողանայ
իր դերը կատարել, անհրաժեշտ է, որ
լինեն հոգաւորներ՝ նրան ուսանելի եւ օգ-
տակար դարձնելու իրականութիւնը:
Անհրաժեշտ է, որ ցուցահանդէսի բա-
ժինները, ներկայացրած ժողովածուներ-
ը եւ ընտրող արդիւնները յատուկ
ուսումնասիրութեան ենթարկվեն եւ այդ
ուսումնասիրութիւնների հետեւնեքները
յայտնվեն հասարակութեան դասակա-
նութիւնների, բացատրութիւնների, զը-
րոյցների եւ մասնաւոր յօդուածների մի-
ջոյցով: Այդ մի կողմից, իսկ միւս կողմից
կարելի է, որ առաջիկայ ժողովներում,
ուր պէտք է ընկնեն Կովկասի արդիւնա-
գործութեան խնդիրները, մասնակցեն այն
բոլոր անձինքը, որոնք կարող են իրանց
գործնական փորձառութեամբ, իրանց
մասնագիտական պատրաստութեամբ եւ
հմտութեամբ օգնել խնդիրների լուրջ
բազմակողմանի մշակութեան:

Եթէ մենք նախօրոք հոգ չենք տանի
այդ բանի մասին, ցուցահանդէսը կը մնայ
միայն իբրեւ մի հանդիսարան զբոսանքների
կատարելու եւ ժամանակ անցկացնելու հա-
մար, իսկ ժողովները զրկված կը լինեն
նրանց կենդանացող գործունեայ տարրից
եւ կանցնեն առանց էական հետեւնեքների:
Ինչու ուշ չէ: Դեռ կարելի է գործել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Օրվայ ամենանշանաւոր, խոշոր եղելութիւ-
նը Կովկասեան յօբելեանական ցուցահանդէսն
է, որ պաշտօնապէս բացվեց Թիֆլիսում եւ
կը տեսնէ մօտ երկու ամիս: Մի գեղեցիկ, հազ-
ազուա մօտ է դա մեզ համար: Մուշտայիդ
այգու ժամ, ընդարձակ մի տարածութեան
վրայ, կառուցվելին մի քանի ամսվայ մէջ ա-
հագին շինութիւններ. մեր երկրը այնտեղ
պիտի ցոյց հանէ իր երեսի քրտինքի պտուղ-
ները, իր խաղաղ առաջադիմութեան նշան-
ները: Ինչպէս յայտնի է, այս սեպտեմբերին
Կովկասը ամենամեծ է ուսուցիչ տիրապետութեան
առաջին հարիւրամեակը: Եւ ահա այդ տօնա-
խմբութիւնների մէջ առաջին տեղը առած է
ցուցահանդէսին, որպէս զի հարիւր տարվայ
կուլտուրական աշխատութիւնների հետեւնեք-
ները հանգիստ աշխարհի առաջ: Ինչ ցոյց կը
տայ նա.—արդեօք շատ ենք զարգացել, շատ
ենք հասունացել: Այդ հարցերին պատասխա-
նել առ այժմ չէ կարելի. ցուցահանդէսը դեռ
բոլորովին պատրաստ չէ, դեռ նրա բոլոր բա-
ժինների վերաբերմամբ չէ կարելի վերջնական
խօսք ասել: Այսօր նրա բացումը է միայն եւ
տեղական բոլոր լրագրողները, ի հարկի, սըր-
տանց ողջունում են օրվայ տօնը: Ահա, ի միջի
այլոց, ինչ է առում «Новое Обозр.» լրագիրը.
Ցանկանք, որ Կովկասեան ցուցահանդէսը,
որ բացված է նոր, կուլտուրական կեանքի

երկրորդ հարիւրամեակի սկզբում, լինի երկ-
րի համար այն լաւ հարցաքննութիւնը, որից
յետոյ հարցաքննվողը, ցոյց տալով իր գե-
ղեցիկ ընդունակութիւնները, դուրս է գա-
լիս դանիկից ոյծների, եռանդի եւ ազդեցիկ
կատարելագործվելու ցանկութեան նոր պա-
շարով: Մենք, գրչի, ապագայ մարդկու-
թեան այս մեծ արի, աշխատաւորներա, չենք
կարող համակրական խօսքերով չը ձայնակ-
ցել այն հանդիսաւոր աղաղակներին եւ
նուազածութեան, որոնք լսվում են ի պա-
տիւ կովկասեան յօբելեանական ցուցահան-
դէսի բացման Փառք կուլտուրայի այդ յու-
շարձանի շինութեան վրա աշխատողներին,
փառք այն հասարակ բանուորներին, որոնք
կայնով եւ մտքով կառուցել են երկրա-
գործութեան եւ արդիւնաբերութեան այդ
կախարհական ամրոցը, որին վիճակված է
այնքան քիչ ժամանակ ապրել, բայց որ
այնքան շատ բան պիտի անէ կենդանի հա-
մար... Կեցցէ լուսաւորութիւնը... Մենք
արդէն միացել ենք մեր ձայնը այդ ողջոյն-
ներին եւ պատրաստ ենք միշտ կրկնել նոյն
ներքող լուսաւորութեան, առաջադիմու-
թեան...

ՑՈՒՑԱՆԻՒՄԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, սեպտեմբերի 2-ին, տեղի ունեցաւ
Կովկասեան ցուցահանդէսի հանդիսաւոր բա-
ցումը: Առաւօտեան 9 ժամից յետոյ հան-
դիսականները սկսեցին երեւալ ցուցահանդէսի
հրապարակում եւ ժամի 1-ին, երբ նշանակ-
ված էր բացումը, ցուցահանդէսը լիքն էր
հրաւիրված հիւրերով եւ էկսպոնենտներով:
Ուղիղ ժամի 1-ին ցուցահանդէս եկաւ Կովկա-
սեան կառավարչապետ իշխան Գ. Ս. Գոլիցին
եւ սկսվեց մաղթանքը ցուցահանդէսի կենտ-
րօնական մուտքի մօտ:

Բացման հանդէսին ներկայ էին Կովկասեան
կառավարչապետի օգնական Ֆրեդէ, Կովկա-
սեան Գիւղատնտեսական ընկերութեան փոխ-
նախագահ եւ խորհրդի անդամները, Թիֆլիսի
քաղաքապետը եւ քաղաքային վարչութեան
անդամները, երկրագործութեան միութեան
կովկասեան իրաւոր, գանապաւ պետական եւ
հասարակական հաստատութիւնների եւ հիմ-
նարկութիւնների ներկայացուցիչները, ժամուի
գործողները, ցուցահանդէսի բաժինների կար-
գադրիչները եւ բազմաթիւ երկսեռ հապարա-
կութիւն:

Մաղթանքը կատարեց Վրաստանի եւ Իմե-
րէթիայի էկզարխ Ֆլավիան: Մաղթանքի ժա-
մանակ Վրաստանի քահանան խօսեց մի ճառ,
որի մէջ յայտնեց այն միտքը, որ միայն սէրը
եւ համերաշխութիւնը կարող են ստեղծել
կուլտուրական կեանք եւ առաջադիմութիւն,
իսկ թշնամութիւնը եւ փոխադարձ անվստա-
հութիւնը արգելք են հանդիսանում զարգաց-
ման: Մաղթանքից յետոյ ցուցահանդէսի Կո-
միտէի իշխան Անդրեյիկով խօսեց մի ճառ,
որի մէջ համառօտ կերպով գնդեցեց ցուցա-
հանդէսի կազմակերպութեան պատմութիւնը եւ
յայտնեց, թէ ներկայ ցուցահանդէսը բացված
է Կովկասեան Գիւղատնտեսական ընկերու-
թեան յիսնամեակի եւ Վրաստանի Ռուսաս-
տանի հետ միացման հարիւրամեակի յօբելե-
անների առթիւ: Եւ նախապէս ունի մի կող-
մից ներկայացնել Կովկասի արդի վիճակը, իսկ
միւս կողմից պարզել մի շարք հարցեր նրա
կուլտուրական առաջադիմութեան համար:

Այնուհետեւ կարդացվեց Մեծ Իշխան Մի-
խայիլ Նիկոլաւիչի հեռագիրը Բորժոմից: Մեծ
Իշխանը, շնորհաւորելով ցուցահանդէսի բա-
ցումը, յայտնում է, որ նա անկարող եղաւ
ներկայ լինել նրա բացման Այդ հեռագրից
յետոյ կարդացվեց երկրագործութեան միութեան
Երմոլովի հեռագիրը, որի բովանդակութեան
հետ մեր ընթերցողները ծանօթ են «Մշակի»
անցեալ համարից:

Այնուհետեւ կառավարչապետը դուրս եկաւ
ցուցահանդէսի հրապարակը եւ այնտեղ կանգ-
նած մեծ բազմութեան մէջ յայտարարեց ցու-
ցահանդէսը բացված: Այդ յայտարա-
րութիւնից յետոյ միացեալ խումբը եւ օր-
կեստը տեղական խօսքերի հետ միասին եր-
գեցին կայսերական հիմնը:

Հիւրերի համար առանձին սեղանի մօտ
պատրաստված էին միզ եւ ըմպելիքներ:
Այնուհետեւ հանդիսականները ցրվեցին դէ-
պի զանազան բաժիններ ծանօթանալու հան-
դէս բերված իրերի հետ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, սեպտեմբերի 2-ին

Նորերա Պետագործութեան յանկարծամահ եղաւ
տեղական հայոց եկեղեցու երէցփոխ Ղազա-
րոս Սվէշիկեանը: Անձամբ ճանաչելով հան-
գուցեալին, պարտք եմ համարում մի քանի
խօսք ասել այդ համակրելի անձնաւորութեան
մասին:

Սվէշիկեանը մեր դասական այն հա-
զուազուտ գործիչներից էր, որոնք հասարա-
կական գործը չեն ծառայեցնում իրանց անձ-
նական շահերին ու ծառայելով իրանց հասա-
րակութեան, գիտակցաբար հատուցանում են
նրան իրանց բարոյական պարտքը միայն: Ղա-
զարոս Սվէշիկեանը երկար տարիներ եղել է
Պետագործակի հայոց ծխական դպրոցի հոգա-
բարձու, նրա գոյութեան օրով, ու այնուհե-
տեւ եկեղեցու երէցփոխ մինչեւ իր ծանր թէ-
ւատչին եւ թէ երկրորդ պայծառութեամբ անդա-
նուրի գործիչների հետ միասին նա նշանաւոր
կերպով նպաստել է Պետագործակի հայ դպրու-
թի հասարակական գործերի բարգաւաճման,
որը նկատելի է Պետագործակի իւրաքանչիւր
մի այցելուի համար: Փոքրածիւ հայ գաղու-
թը ունի հոյակապ բարեգործ եկեղեցի, եկե-
ղեցական-ծխական դպրոցի շէնք ու մի քանի
այլ եկեղեցապատկան շինութիւններ: Եկեղեցին
իր ներքին բարեկարգութեամբ միշտ աչքի է
ընկել. կայ մշտական երգչիկ խումբ, տեղի է
ունենում միշտ կանոնաւոր ժամատոյութիւն:
Բարեգործութիւնն էլ մի օրգանական երեւ-
ոյթ է դարձած հասարակութեան մէջ, որը,
այսպէս ասած, «չէ» ասել չը գիտէ: Այդ հա-
մակցելի գաղութի այդպիսի առաջադիմու-
թեան տարիների ընթացքում ի թիւս այլոց
միշտ մեծ դարկ է տեսել նաեւ. հանգուցեալ
Ղազարոս Սվէշիկեանը, որի սիրտը, դուռն
ու գրպանը միշտ բաց են եղել բոլոր նրան
գիմոյցների համար, որը բազմաթիւ օտարազ-
գիներին մէջ պահպանել է մի իսկական հայ
օջաղ ու աղաղակով իր լեզուի ժողովրդակա-
նութիւնը ու մայրենի գրագիրութիւնը միշտ
բարձրացրել է օտարազգիների ժխորի մէջ
ապրող իր փոքրածիւ հասարակութեան մէջ:

Ստ. Տէր-Աւետիքեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, սեպտեմբերի 2-ին, Կովկասեան յօ-
բելեանական ցուցահանդէսը բացված յայտա-
րարելուց յետոյ, պ. Կառավարչապետը ուղար-
կեց Բորժոմ, Նորին Կայսերական Բարձրու-
թիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաւիչին հե-
տեւեալ հեռագիրը. «Ձերդ Կայսերական Բարձ-
րութեան Օգնական Կառավարչութեան
տակ գտնվող Կովկասեան յօբելեանական ցու-
ցահանդէսը բացված է այսօր իմ միջոցով:
Ցուցահանդէսը ներկայացնում է տեղական
արդիւնաբերութեան պատկերը, որի ճիւղերից
շատերը իրանց զարգացմամբ պատրաստան են
Ձեր ազդեցութեամբ ուղարկութեան դէպի երկրի
կարիքները այն ժամանակ, երբ Ձեր Կայսերա-
կան Բարձրութիւնը կառավարում է ի՞նչ Կով-
կասը»:

Շաբաթ, սեպտեմբերի 1-ին, երեկոյեան
10¹/₂ ժամին, Ն. Բողարջեանցի ծխախոտի
գործարանում, որ գտնվում է Գուրգուլի փո-
ղոցի վրայ, հրդեհ ծագեց: Կրակը սկսվեց գոր-
ծարանի մեքենաների բաժնում եւ աղալ յու-
տով անցաւ երեքտարական լուսաւորութեան
կայարանի բաժինը: Հրդեհաշիջ խմբի ջանքե-
րով հնարաւոր եղաւ առանձնացնել կրակը,
այնպէս որ հարեւան տները ոչ մի վնաս չը
կրեցին: Բացի մեքենաների եւ էլեկտրական
լուսաւորութեան բաժանմունքներից, իսպառ-
այրվեց նաեւ գործարանի այն բաժանմունքը,
որտեղ ծխախոտ են կարտում. միացած բա-
ժինները աղաղակեցին: Գործարանը տպահովա-
գրված է: Հրդեհի պատճառը դեռ եւս չէ
պարզված: Վնասը մեծ է:

Մեզ հաղորդում են, որ կիրակի օր, սեպ-
տեմբերի 2-ին, Թիֆլիսի Մէյդանի Կաթուղիկէ
ս. Աստուածածին եկեղեցու միաբանութեան
նախաձեռնութեամբ կատարվել է Գրիգոր Զան-
չեանի մահվան տարեկիցի առթիւ հոգեհան-
գիտ: Հոգեհանգստին ներկայ էր ժողովրդի ոչ
մեծ բազմութիւն: Գարեգին վարդապետը քա-
րող խօսեց:

Լուրերին նայելով, ժողովրդական լուսա-
ւորութեան միաբանութեան մէջ հերթա-
կան է դարձրած ուսուցչական աշխատանք-
ում ազատ ունիւղիւնների ընդունելութեան
կանոնները փոփոխելու հարցը: Ինչպէս յայտ-
նի է, այժմեան կանոններով ազատ ունիւղիւ-
նների ընդունելութիւնը մեծ դժուարութիւնով
է կատարվում եւ նրանց թիւը խիստ սահմա-
նափակ է համալսարաններում:

Գիւղացիներից հազաւաթիւներ գնելու կա-
նոնաւորման հարցը վաղուց զբաղեցնում է
ինչպէս կառավարութեան, այնպէս էլ հասա-
րակական շրջանները: Այս առթիւ շատ ան-
գամ ձեռնարկված են միջոցներ, որոնք առ-
կայի ցանկալի հետեւանդներ չեն տուել: Այժմ
մտադրութիւն կայ հիմնաւորապէս փոխել այդ
մասին գոյութիւն ունեցող կանոնները եւ
վճարական միջոցներ ձեռք առնել գիւղական
ազգայնականութիւնը ազատելու համար զանա-
զան կապալառուների եւ գիւղացիների աշխա-
տանքով հարստացողներ խաբէութիւններից:

ԲԱԳՈՒԻԹ մեզ գրում են. «Երկար շրջերից
յետոյ, վերջապէս, օգոստոսի 31-ին, գրչերը,
անձրեւ եկաւ, որ շարունակեց մի ամբողջ
օր: Եղանակը զգալի կերպով փոխվեց, հովա-
ցաւ եւ, որ ամենազրկաւորն է, աղաւթից մեզ
անտանելի փոչից: Պէտք է նկատել, որ Բազ-
ուում սովորութիւն չը կայ փողոցները մաքրել
եւ ջրել: Այդ երկու պարտականութիւնը կա-
տարում են քամիք—Որձը, համարեա շաբա-
թը երեք օր եւ անձրեւը, որը, դժբաղդաբար,
շատ սակաւ է պատահում: Իսկ թէ ուր է դը-
նում քաղաքի կողմից փողոցները ջրելու ու
մաքրելու յատկացրած դումարը, մենք այդ չը
գիտենք»:

ՂՈՒԻՐԱՅԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի
17-ին Բուզուզ գիւղում հետեւեալ եղանա-
գործութիւնն է կատարվում: Եօթը տարեկան
մի աղջիկ, Ջամէլա Խան-Բաղաւ-բէկ-ըղին
յրադացի ճանապարհով է դէպի գիւղը. հա-
նապարհին նրան հանդիպում է համագիւղացի
ՄԵՆԷՐ Սարի-օղլին, բնում է փոքրիկ աղջ-
կան, քաշում է անտառը եւ բնաբարձում է:
Երեխայի լացը Կոմիս վրայ է հասնում ձիով
ետեւից եկող եղբայրը՝ Հաջի-Աղա-բէկը, որը
ակնատես լինելով եղելութեանը, զայրանում
է եւ սպանում է յանցագործին, նախ վրաւա-
րելով նրան գնաւով, ապա սրով չորս տե-
ղից. նա ինքն էլ խոտովանում է տանուտե-
րին իր յանցանքը: Տանուտէրն ուղարկում
է մարդասպանին եւ անպատճառ աղջկան
քննիչի մօտ, որը բժիկների եւ մանկա-
բարձուհու ըննութեան է ենթարկում եւ
հաստատվում է, որ 7 տարեկան Ջամէլան
բնաբարձված է իսկապէս Ողորմելին լացում,
աղաղակում էր, երբ նրան հարց ու փորձի էր
ենթարկել քննիչը. ամօթից խեղդված երեխան
փրկութիւն էր աղերսում իր եղբոր համար,
որը սպանել էր նրան անպատճառ չարագոր-
ծին: Գննիչը արձակեց մարդասպանին»:

ԻԳՐԻԻԹ մեզ գրում են. «Օգոստոսի 25-ին,
շաբաթ օրը, ցերեկով, անպայմանում է վար-
դան Սօնայեանի 10 տարեկան տղան. մայրը
եւ դրացիները մինչեւ կիրակի ուշ գիշերը ու-
րոնում են եւ չեն գտնում. այդ իսկ գիշերը չա-
րագործները մտնում են տուն եւ սպանում
մօրը, իսկ երեքշաբթի օրը մարմինը գտնում
են ջրաղացի նաւի տակ թաղված: Հաւանա-
կան են համարում, որ մօր եւ որդու սպանող-
ները մի եւ նոյն մարդիկ լինեն: Ոճրագործ-

ԲՈՒՖԹԱԼՈ, 5 ժամ 48 րոպէ կէսօրից յետոյ: Մակ-Կինլէյի ընտանիքը կանչվել նախագահի մահվան անկողնի մօտ: Այլ եւս ոչինչ յոյս չը կայ:

ՊԵՏԵՐԲՈՒԳ. Օգոստոսի 31-ին, գերմանական կայսրի մօտ «Հոհենցոլերն» նաւի վրա նախաճաշից յետոյ, Թագաւոր Կայսրը բարեկամաց Գերմանացի ընկնել Կիլ «Շտանդարտ» նաւով:

Հրատարակված է Բարձրագոյն հրաման թշկական մասը վերակազմելու մասին Զաւաթական շրջանում:

ԳԷԼԱ. Նիկոլայ II Կայսրը գերմանական կայսրին նշանակեց նախագահ զբաղւածների գնդի չէֆ, որը ամենանշանաւորներից մէկն է ռուսաց զորքի մէջ. առաջ նրա չէֆն էր Ընդհանուր-Մովսէս Մեծ Իշխան Կոնստանտին Նիկոլաեւիչը: Վերջէվ Կայսրը չնորոգեց Ռուսաց կայսրին Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդորովնայի անունան գլխաւորական գրագրուհին գնդի համազգեստը:

ԲՈՒՖԹԱԼՈ, 8 ժամ 35 րոպէ: Ժողովուրդական մեծ խմբեր հաւաքվել են այն ոստիկանաբանի մօտ գտնված փողոցներում, ուր բանտարկված է Զօլդու, բայց ուր մուտքը արգելված է Ռուսիկանտան զօրեղ զորաբաժինը պաշտպանում է տունը եւ երկու գնդեր պատրաստ կանգնած են այն գէպըտով, եթէ ամբողջ կը սկսէ յարձակվել ոստիկանատան վրա:

ԲՈՒՖԹԱԼՈ, 9 ժամ 27 րոպէ: Գիտակցութիւնը, ըստ երեւոյթի, վերջնականապէս կորցնում է Մակ-Կինլէյ. ամենապարզ րօպէններն նա միմիայնում էր կոնշլը:

ԲՈՒՖԹԱԼՈ, 6 ժամ 30 րոպէ: Օպյոտարարված է, որ թթուածինը դադարեց ներգործել Մակ-Կինլէյի վրա: 7/3 ժամին ազգականները եւ կարիքներ ու պատգամաւորների ժողովի անդամները, նոյնպէս եւ նախագահի այստեղ գտնվող բարեկամները մնաւ բարեկամներից նրան. նրանք գտնվում էին հիւրերն ընտանիքում եւ մէկ մէկ մտնում էին հիւանդի տնակը: 7 ժամ 28 րոպէին նախագահը գիտակցութիւնը կորցրեց, որը կարծրեցում մնաւ: Երբ մինչեւ 7 ժամ 50 րոպէին Ապա նախագահը, ուժեղացնող միջոցները ազդեցութեան տակ, ուշքի եկաւ եւ պահանջեց, որ կանչեն իր կնոջը, որը իսկույն եւ եթ եկաւ:

ԲՈՒՖԹԱԼՈ, 10 ժամ 59 րոպէին երկույնան Մակ-Կինլէյի մարմին անդամները վաղուց արդէն ստեղծ են. նախագահը երկու ժամից աւելի ռուսկորոյց պատկած է: 11 ժամ 7 րոպէին Բերնէյ յայտնեց, որ նախագահը կարող է էլի մի քանի ժամ ապրել, թէպէտ համարեա չէ չնշում:

ԲՈՒՖԹԱԼՈ, Նախագահ Մակ-Կինլէյ մեռաւ առաւօտեան 2 ժամին:

ԲԵՐԼԻՆ. Սկսել են զարգարել քաղաքը: Քաղաքային տունը եւ մի քանի եկեղեցիներ արդէն զարգարված են զբօսայինքով. ազգայնականութիւնը եռանդով նպաստում է զարգարաններ, առեւտրական պալատը չքեղ ընկալարան է պատրաստում մամուլի համար: Տաճարի մէջ կարգիւնալը հոգեւորականութեան հետ միասին կը զիմարեն Կայսերական Զոյգին հրապարակ վրա զանգահարութեամբ եւ ուռուց օրհներգով. ներսում տաճարը զարգարված կը լինի ուռուց զբօսայինքով:

ՊԱՐԻԶ. Ռուսաց Կայսերական Զոյգի առաջիկայ զարուստի պատճառով, Ռուսի ղէպարանակների կօմիտէն զիմայ հանրապետութեան նախագահին հետեւեալ հայրենասիրական ուղերձով. «Ռուսի ղէպարտամենտի ընտանիքները զիմում են ձեզ յայտնելով իրանց յարգանքի զգացմունքները եւ չնորհաւորութիւնները այն բանի առիթով, որ զուր յանձն առաք նախաձեռնութիւն, որպէս զի Մեծ Դաշնակցից այրցել ճորանախան Այդ այցելութիւնը զայնպիսիցութեան նոր սրբազորութիւն է ներկայացնում, որը այնպէս լաւ պատասխանում է երկու ազգերի զգացմունքներին եւ շահերին: Նա միայն կարող է ամբարցնել այն կապերը, որոնք զոյութիւն ունեն երկու ժողովուրդների մէջ փոխադարձ օգտի եւ խաղաղութեան պահպանութեան համարը:

ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ. Դրութիւնը Կապի զաղթականութեան մէջ չափազանց մուայ է. երկրի ներսում ամբողջ ֆէլդֆորէնտութիւններ միանում են թշնամուն: Այսօր տեղեկութիւն է ստացված, որ ամբողջ Կիւսիս-արեւմուտքը, այսինքն Յիւզէնբուրգեան, Վայիստոնեան, Սուտերլանդեան, Կարնարվոնեան, Վանգիպօրպեան եւ Կանչիլեանեան շրջանների մասերը անկայտնի ապստամբվել են:

ԲՈՒՖԹԱԼՈ, Նախագահը մեռաւ գիշերվայ

2 ժամ 15 րոպէին, դեռ երեկոյց, 7 ժամ 50 րոպէից, ուշքը կորցրած լինելով: Քահանայ չը կար նրա մօտ: Նախագահի վերջին խօսքերն էին. «Մնաք բարեւ բոլորդ: Դա Աստուծու ճանապարհն է, թող կատարվի Նրա կամքը: Այդ խօսքերը գրի է անցկացրել բրօքիչ Մանն: Տիկին Մակ-Կինլէյ տեսաւ իր ամուսնուն վերջին անգամ գիշերվայ 11 եւ 12 ժամերի միջեւ. նա նստած էր մահվան անկողնի մօտ, բռնած ունենալով ամուսնու ձեռքը մի եւ նոյն ժամանակ կարիքներ անդամները միկ-մէկ ներս էին մտնում այն տնակաւ, ուր պատկած էր մոնոլոգը: Մահը հասնելու ժամանակ ներկայ էին մասնաւոր քարտուղար Կարտուայոն, թշկական Բայրի, տիկին Բերքեր իր աղջկայ հետ եւ տիկին Դէնկէն: Մահվան անմիջական պատճառը չէ ստուգված, եւ այդ պատճառով մարմին անդամահատութիւնը անհրաժեշտ է: Նախագահի նշխարը կը փոխադրվի Վաշինգտոն եւ այնտեղ կը թաղվի պետական հաշով: Փոխ-Նախագահ Բուզվէլտ պաշտօնապէս երդում կը տայ այնտեղ, ուր կը ստանայ նա տեղեկութիւն մահվան մասին: Միմիայնները իսկույն հրաժարական կը տան իրանց ամբողջ կազմով Բուզվէլտին հնարաւորութիւն տալու, ցանկութեան ղէպըտով, նոր միմիայնութիւն կազմակերպել:

ԲՈՒՖԹԱԼՈ, Երբ չուտով կէս գիշերից յետոյ լուր տարածվեց, որ նախագահը մեռաւ, փողոցները լցնող ժողովրդի ահագին զրգոված ամբոյններ յարձակվում էին բանտի վրա, ուր գտնվում էր Զօլդու, բայց հետեւեալ եւ հեծեալ ոստիկանները յետ մղեցին նրանց:

ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ. Կապի պարլամենտի բացումը նորից յետաձգված է մինչեւ նոյեմբերի 7-ը:

ԴԱՆՑԻԳ. Կայսրը զիմեղ հետեւեալ հետազոտներով Բուֆթալո. Աւրաքին գործերի պետական քարտուղարին: Խորին կեպով վստայեղ Նախագահ Մակ-Կինլէյի վաղուցում մահվան լուրը ստանալու պատճառով, շտապում եմ յայտնել գերմանական ժողովրդի խորին եւ սրտագին համակրութիւնը ամերիկական մեծ ազգին: Գերմանիան Ամերիկայի հետ միասին ողբում է նրա ազնիւ որդուն, որը իր կեանքը զոհեց իր պարտաւորութիւնները կատարելու ժամանակ իր երկրի եւ իր ժողովրդի համարը: Տիկին Մակ-Կինլէյին. Նորին Մեծութիւն Կայսրուհին եւ եւ խնդրում ենք ձեզ ընդունել մեր ամենաանկեղծ վստի արապայատութիւնը ձեր կրած կորստի համար ձեր սիրեցեալ ամուսնու մահվան պատճառով, որը ընկալողութիւն մարդապանի ձեռքից: Աստուծո, որ այսքան տարիներ երջանկութիւն էր տուել ձեզ ձեր ամուսնու հետ, թող չնորհէ ձեզ ոյժեր տանելու այդ ծանր հարուածը, որով Նա ձեզ այցելեց: Վերջէվ:

ԴԱՆՑԻԳ. Կայսրը, ժամանելով առաւօտեան 10 ժամից յետոյ, զիմաւորվեց հրապարակով:

ԴԱՆՑԻԳ. Կայսրը լէյ-հուսարների համազգեստով ընդունեց պատաւոր պոնչ եւ պատախանկով բուրգօմստրի ճաշին, տարաւ լէյ-հուսարների բրիգադան քաղաքային տնից ղէպի զօրանոցը Լանգֆուրտը, ուր նախաճաշ էր պատրաստված կայրիւնում:

ՍԱՐԱՏՈՎ. Եկաւ նոր նահանգապետ Էնգէլ-գարտ:

ՀԷԼՍԻՆԳՅՈՐՄ. Վերանդական Լորգրուս տպված է. «Թագաւոր Կայսրը օգոստոսի 15-ին բարեհաճեց Բարձրագոյն մատնացոյց անել ռուսաց լեզուի գործադրութեան ժամանակաւոր կարգը ֆինլանդական նահանգական վարչութիւնների գործադրութեան մէջ՝ նրանց յարաբերութիւնների ժամանակ մեծ իշխանութեան ուրիշ կառավարչական հիմնարկութիւնների հետ, զրանց մէջ հաշտելով եւ ձիւղանդական մեծ իշխանութիւնը, որոնց գործադրական լեզուն ռուսերէն է: Նահանգապետներին թող է տրվում ռուսաց լեզուն գործադրել մեծ իշխանութեան կառավարչական մնացած հիմնարկութիւնների հետ ունեցած յարաբերութիւնների ժամանակ: Եւսկ թղթերը թոյլ է տրվում գրել զուգընթաց ընագրով ռուսերէն եւ տեղական լեզուներով: Առիթն է—Նիւլանդեան նահանգական վարչութեան մերժումը վաւերացնել եւ ուղարկել այն ռուսերէն թղթերը, որ ստորագրել էր նահանգապետ զենեւալ Կայսրօրօգով:

ՊԱՐԻԶ. «Journal des Debats» լրագիրը գրում է զանցիգեան տեսակցութեան առիթով. «Ռուսաց Կայսրը ընդունեց գերմանական կայսրի հրաւերը աւելի եւս սիրով, որովհետեւ ամեն անգամ, երբ աշխարհին յիշեցնում էր ֆրանս-ռուսական զայնակցութեան զոյութեան մասին, երբեք առիթ բաց չէր թողնվում հաս

տատելու, որ այդ քաղաքական կօմբինացիան ոչինչ փոփոխութիւն չէ առաջացրել Ռուսաստանի յարաբերութիւնների մէջ ղէպի իր արեւմտեան հարեանը: Կարելի է մինչեւ անգամ ասել, որ միջազգային քաղաքականութեան այժմեան դրութեան ժամանակ, Ֆրանսիան ոչինչ չէր չափի, եթէ երկպետեան դաշնակցութիւնը Գերմանիայի վերաբերմամբ թընամական դրութիւն թռնէր: Յամենայն ղէպս, վատ չէր լինի, եթէ Յարի վերաբերմունքը ղէպի Վիլհէլմ Կայսրը զիւրացնէր երեք պետութիւնների մէջ եղած յարաբերութիւնները:

ՊԵՏԵՐԲՈՒԳ. «Правительственный Вестник» լրագրում տպված է հետեւեալ հետազոտի Կիլից. «Կօպէնհագէնում կոմս Լամզգորֆ ունկնդրութիւն ունէր մեծ-բրիտանական թագաւորի մօտ. զանցիգեան նաւակայանում կոմսը առանձին ունկնդրութիւն ունեցաւ գերմանական կայսրի մօտ եւ ստացաւ նորին մեծութեան պատկերը. բացի զրանց կոմս Լամզգորֆ յաճախակի խօսակցութիւններ ունէր կանցլէր ֆօն-Բիւլովի հետ:

ԴԱՆՑԻԳ. Պրինց Հէնրիխին տրված է ծովապետի աստիճան:

Կ. ՊՈԼԻՍ. Այսօր հրատարակված է իրադէ, որով հաստատվում է Տուրքիի հետ կապված համաձայնութիւնը: Տուրքիի վճարելիք գումարը 1500 թիւքական ոսկով պակաս է այն գումարից, որ մինչեւ այժմ ցոյց էր արվում:

ԿԻԼ. Ռուսաց Կայսրը ժամանեց «Շտանդարտ» զբօսանաւով, ուղեկցութեամբ «СВѢТЛАГА» եւ «Варягъ» կրէյսերների երկու եւ կէս ժամին: Մովսէսիային բաւարեւայն ողջունեց թնդանթագութեամբ:

ԲՈՒՖԹԱԼՈ. Մակ-Կինլէյի մարմինը կուղարկվի Վաշինգտոն երկուշաբթի, ուր ի ցոյց կը դրվի: Թագաւոր տեղի կունենայ հինգշաբթի: Դիակահատութիւնից երեւաց, որ մահը առաջացել է վերքի բորբոքումից:

ԲՈՒՖԹԱԼՈ, Տիւրքիկայ 11 ժամ 40 րոպէին Բուզվէլտ հասաւ յայտեղ: Նախ եւ առաջ նա այցելեց իր բարեկամ Վիլիօպին, իսկ յետոյ, պատաւոր պահակախմբի ուղեկցութեամբ, գնաց այն տունը, ուր գրված է Մակ-Կինլէյի մարմինը, որից յետոյ վերադարձաւ Վիլիօպի մօտ եւ նրա տանը նախագահական երդում տուեց:

ԲԼՈՒՖԹՈՆՏԷՆ. Մուրրէյ եւ Բօտա աֆրիկանցիք քահանաները վերադարձան այսօր խաղաղասիրական այն անաղղ միասնայից յետոյ, որ նրանք ունէին Շտէյնի եւ Դեվէտի մօտ: Նրանք այդ միասնական կատարելու, որպէս զի բացառաւ նրանց Կիտչենէրի պրօլաթարիան: Նրանք առաջարկում էին անձնատուր լինել: Շտէյն եւ Դեվէտ չը ցանկացան նրանց լսել:

ՊԱՐԻԶ. Զօրահանդէսները գնացած օտար զինուորական կցորդները կը մնան Բէյմուսմ միմիայն գնեւորալ Սախարով կը մնայ գնեւարախմբում Բրիւթէրի մօտ Բէտէլում:

ԲԵՐԼԻՆ. Զինուորական միմիայնը հասաւ այստեղ: Ազգայնականութիւնը ողջունում էր զօրահանդէսներն ուղարկված օտար օֆիցերներին: Եւսկ էին լեկնեց զօրքը, լեկնե Ռուսաստան» աղաղակները: Բրիւթէր հրաւերեց ճաշի օտարազգի օֆիցերներին: Մակ-Կինլէյի մահվան պատճառով, ի յարգանս ղէպի ամբրական կցորդը, երաժշտութիւնը եւ այլն վերացեց էին ճաշի ժամանակ:

ՆՈՎՈՐՈՍԻՍԿԱ. Սեպտեմբերի 1-ին երեկոյնան մարդատար գնացքով ժամանեց երկրազորութեան միմիայնը: Սեպտեմբերի 2-ին միմիայնը ճանապարհ է ընկնում Սօչի:

ԴԱՆՑԻԳ. Պատաւոր պոնչի ժամանակ Արտուրսօֆում պատասխանելով օրէր-բուրգօմստրի ճառին, կայսրն ասեց. «Ես հէնց նոր եկայ իմ Բարեկամ Ռուսաց Կայսրի հետ խորին խորհրդաւոր հանդիպումից՝ յետոյ, որը տեղի ունեցաւ ի Մեր փոխադարձ իրակատար գործունակութիւն եւ որի շնորհիւ մի եւ նոյն ժամանակ անյողողող ամբանում է այն համոզմունքը, որ եւրօպական խաղաղութիւնը երկար ժամանակ պահպանված կը մնայ ազգերի համար: Այդ հանգամանքը թեթեւացնում է եւ իմ սիրտը հին գեղեցիկ առեւտրական քաղաքի պատերից մուտք գործելու ժամանակ: Կայսրը շարունակեց, թէ դեռ առաջին այցելութեան ժամանակ 1892 թւին, նա իրան նպատակ էր դրել Դանիգիւր ծովածած զրուիթեան հասցնել— ամենազեղեցիկ նպատակ թագաւորի համար: Ազատ լինելով կուսակցական քաղաքականութեան վրա հիմնված ճշող խորհրդածութիւնների մշտնջ, մի մշտն, որը երկար ժամանակ արգելք էր դառնում քաղաքի աճման, այժմ Դանիգիւր

սկսում է ծաղկել: Կայսրը ուրախութիւն յայտնեց քաղաքի շինութիւնների աւանդական ստիւը պահպանելու առիթով եւ յիշեցրեց այն հետաքրքրութեան մասին, որով անցեալ տարվայ ամառը վերաբերվեց Դանիգիւր զարգացման վիկտորիա կայսրուհին, որը այն ժամանակ արդէն տանջվում էր ծանր հիւանդութիւնից: Կայսրը ուրախութիւն յայտնեց, որ իրան—ոչ ամայն ծանր կուր—աղողվեց յաղթել դժուարութիւնները, որոնք, մասնաւորապէս ֆինանսական պայմանների պատճառով, արգելք էին դառնում Դանիգիւր զարգացմանը: Խոստանալով նախկին հետաքրքրութեամբ վերաբերվել քաղաքին, նա աւելացրեց. «Եւսկ ինձ վաղուց էք ճանաչում, եւ ձեզ յայտնի է, որ եթէ ես մէկ բան նպատակ դնեմ ինձ համար, կիրաւորեմ այդ բանը: Կայսրը խմեց Դանիգիւր բարօրութեան համար: Կենացը ընդունվեց ոգեւորված բացազանութիւնների օրոտով:

ՆԻԻ-ԵՐԿԻ. Բօրանները, ի նշան սգի, ամեն տեղ փակված են:

Նախագահ Բուզվէլտ արտակարգ գնացքով գնում է Բուֆթալո, որը մէկ րօպէում անցնում է մէկ մղոն:

Էմմա Գօլդմանին զգուշութիւնից տարել են անկայտ տեղ:

ԲՈՒՖԹԱԼՈ. Մակ-Կինլէյի մարմինը ծածկոյի տակ հանգչում է այն տնակում, ուր նախագահը մեռաւ: Նախագահի այրին մեծ արեւութիւն է ցոյց տալիս:

3 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒԳ. Ֆինանսների միմիայնը ճանապարհ ընկաւ մի առ ժամանակ ղէպի Ռուսաստանի հարաւը, այնպէս որ միմիայնութեան ղեկավարութիւնը թողեց իր ձեռքում, իսկ նրա բացակայութեան ժամանակ ընթացիկ գործերը կը կատարէր միմիայնը օգնական Կօլօյցեւի:

Մեծ Իշխանուհի Ելիզաւետա Մովրիկիեւնա ճանապարհ ընկաւ Կալուգա:

Մակ-Կինլէյի մահվան առիթով հոգեհանգստեան ժամատացութիւններ կատարվեցին անդրիական եւ բրիտանա-ամերիկական եկեղեցիներում:

ԲՈՒՖԹԱԼՈ. Երդումը տալուց յետոյ Բուզվէլտ խնդրեց կարիքներ անդամներին մնալ իրանց պաշտօններում, մինչեւ որ կօնգրէզը կը գումարվի արտակարգ նստաշրջանի:

ԲՈՒՖԹԱԼՈ. Բուզվէլտ մի հրաւեր հրատարակեց, որով կարգադրվում է, որ հինգշաբթի, Մակ-Կինլէյի թաղման օրը, հոգեհանգստեանը կատարվեն Միացեալ-Նահանգներում ամեն տեղ:

ԲԵՐԼԻՆ. Միջազգային հակահրդեհային ցուցահանդէսը փակեց գիւղատնտեսութեան միմիայնը Պօդէլիլի, երբ հաղորդվեց թէ պրէսիա է տրված: Կայսրուհու պատկերով ինն ոսկէ մէդալներից մէկը, որը ամենաբարձր նշան է համարվում, ստացաւ Պետերբուրգի Կայսերական հրդեհաշէջ ընկերութիւնը. արծաթէ մէդալ կայսրուհու պատկերով շնորհված է ռուսաց «Россия» ապահովագրական ընկերութեան:

ԲԵՐԼԻՆ. Հակահրդեհային ցուցահանդէսի հրաժեշտի ճաշին Պօդէլիլի առաջարկեց կայսրի եւ ցուցահանդէսին ամենակցող բոլոր երկրների թագաւորների կենացը:

ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ. Այստեղ բոլորը միաձայն պնդում են, որ Կիտչենէրի յուլիսի 24-ին հրատարակած շրջաբերականը ամենեւեւ չաւելացրեց անձնատուր եղող բօլքների թիւը:

ԿԱՊԵՏԱՊՈԼԻՍ. Բօլքները Տէրօնի հրամանատարութեամբ յարձակուին գործեցին Հէյդէլբէրգի վրա, որը պաշտպանում էր արեւմտեան եօկիլերեան գնդի մի բաժին: Յարձակումը մեծ համարձակութեամբ կատարվեց, բայց յետ մղվեց:

ԲԼՈՒՖԹՈՆՏԷՆ. Մայր Դամանտին, որը գործում է Հէյրօգի զօրաբաժնի ղէմ, Ֆորտա-միտի մօտ աղողից 11 բօլքներին թակարդի մէջ զցել եւ գերի վերցնել—234 բօլքներ երդում տուեցին Անգլիայի հպատակութեան Վիլբուրգում եւ Գարիսմիտում:

ՄՈՍԿՎԱ. Այսօր Միացեալ-Նահանգների նախագահի մահվան առիթով. անգլիական եկեղեցում ժամատացութիւն կատարվեց:

ՆԵՅԹԱՐՎԱՍՍԷՐ. 31 օգոստոսի (ուշացած): Այսօրվան ծովային զօրախաղերը վերջնապէս յետոյ երկու Կայսրները գնալ ձեռնացան: Դանիգիւր, ուր արդէն հաւաքվել էին պրինց Հէնրիխ, Մեծ Իշխան Ալեքսէյ Ալեքսանդրովիչ իր սվիտայով եւ ծովապետները, ճաշը կայացաւ մօտ երկու ժամին: Սեղանից յետոյ Նոյա Մեծութիւնները էլի երկու բառեւ ժամանակ անցկացրին զբօսանա-

Հնդուսեւթիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ ճիւղ. Մովսէսեան եւ ընկ. ԲԱՅՈՒԻ բաժանմունքում: Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—արվում եւ ուղարկվում են ձրիւրար: Օտարաբաղադրացիները ղիւնում են՝ БАБУ, учредителю коммерческих курсовъ А. И. Теръ-Каспарову. (Է. չ.)